

# ԴԻԱՆԱ ԱՐԳԱՐԻ ՆԱՍԱԿՆԵՐԸ Ս. ԷԶՍԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՐԴԻՆ

Արժուի Բախչիցեան  
mala@freenet.am

Անցեալի հայ կանանց մէջ ուրոյն տեղ է գրաւում անգլիագիր գրող, հրապարակաբան, դիւանագէտ Դիանա Արգարը (Apcar, 1854-1937):

Նրա ծննդեան անունն էր Անահիտ, օրիորդական ազգանունը՝ Աղարէկեան<sup>2</sup>: Նախնիները եղել են նորջուղայեցիներ: Մնուել է Արեւելեան Հնդկաստանի բրիտանական գաղութ Բիրմայի (այժմ՝ Միանմար) մայրաքաղաք Ռանգունում<sup>3</sup> (այժմ՝ Եանգոն), բարեկեցիկ ընտանիքում: Նա առեւտրական Յովհաննէս Աղարէկի եօթերորդ զաւակն էր: Մայրը՝ Զմրուխտ, եղել է Հնդկահայ ճանաչուած վաճառական, գրող, թարգմանիչ, Ազգասէրի եւ Ազգասէր Արարատեանի հիմնադիր-անդամ եւ աշխատակից, Մեսրոպ Թաղիադեանի մտերիմ եւ նրա առաջին կենսագիր՝ Թաղէոս Խաչիկ Աւետումեանի (1810-1863) դուստրը<sup>4</sup>:

Մնողները յաջողապէս գրաղուել են կաթնամթերքների արտադրութեամբ: Յետագայում Աղարէկները տեղափոխուել են Կալկաթա, որտեղ էլ Անահիտը անգլիական կրթութիւն է ստացել կանանց մեծաստանում: 1890ին նա ամուսնացել է ծնունդով նորջուղայեցի վաճառական Միքայէլ Արգարեանի (Մայքի Արգար) հետ, որը մետաքսի վաճառքով է գրաղուել Հնդկաստանի եւ Ճապոնիայի միջեւ: Այսպիսով, Անահիտ Աղարէկը դարձել է Մայրագոյն Արեւելքում գործարարութեամբ եւ առեւտրով գրաղուող Արգար գերդաստանի անդամը:

Նորապսակ գոյգն ամուսնական ճանապարհորդութեան է մեկնել Հոնկոնգ, Չինաստան, Ճապոնիա: Այստեղ էլ նրանք որոշել են մշտական բնակութիւն հաստատել, եւ բնակութեան վայր են ընտրել Կորէ քաղաքը, որտեղ նրանք գրաղուել են Հնդկաստանից Ճապոնիա եւ Ճապոնիայից Հնդկաստան տարրեր ապրանքների ներածման եւ արտածման գործով: Ունեցել են երեք զաւակ՝ Ռոզ (1890, Ռանգուն), Միքայէլ կրտսեր (1891, Կորէ) եւ Ռութ (1896): Միքայէլ Արգարը Կորէ քաղաքում հիմնել է առեւտրական ձեռնարկութիւն եւ Great Eastern հիւրանոցը: 1906ին ամուսնու անակնկալ մահից յետոյ Դիանա Արգարը շարունակել է ընտանեկան գործը, մինչեւ որդու չափահաս դառնալը: Այնուհետեւ նրանք տեղափոխուել են Ճապոնիայի ամենաբանուկ նաւահանգիստներից մէկը՝ Եոկոհամա, Տոկիոյից 30 կիլոմետր հեռու եւ բացել ընդարձակ մի վաճառատուն, որ առեւտուր է կատարել Չինաստանի, ԱՄՆի եւ Եւրոպայի հետ: Նրանք մի մեծ առանձնատուն են ունեցել Եոկոհամայի Եամատէ թաղամասում (չէնք թիւ 220), որի հիւրընկալ դռները բաց են եղել ինչպէս օտար բարձրաստիճան անձանց, այնպէս էլ խոնարհ հայ գաղթականների առաջ:

Առաջին Համաշխարհային Պատերազմի նախօրեակին եւ նրա տարիներին Դիանա Արգարը հանդէս է եկել հայ ժողովրդի մասին դասախօսութիւններով,

յօղուածներով, աշխատակցել Եոկոհամայի *The Japan Gazette* անգլերէն պարբերականին: Այդ թերթի հրատարակչութիւնում հրատարակած նրա անգլերէն գրքերից են՝ *The Truth About the Armenian Massacres*<sup>5</sup> (1910), *The Case of the Armenians* (անթուակիր), *Betrayed Armenia* (1912), *In His Name* (1911), *The Peace of Europe* (անթուակիր), *The Peace Problem* (1912), *Peace and No Peace* (1912), “What the German Foreign Minister Has Said”; “The Powers, the Christians of the East, and the Turk”; “Russian Occupation of Armenia”; “Open Letter to the Right Honorable H.H. Asquith” (1913. չորս յօդուած պարունակող փոքրիկ հաւաքածոյ, որոնցից երկուսն արտատպուած են *The Far East*ից (*Մայիս-Յուլիս* 1913), իսկ երրորդը՝ *The Japan Gazette*ից, (*Յունիս* 1913), *The Great Evil* (1914), *On the Cross of Europe's Imperialism: Armenia Crucified* (1918):

Արդարի գրութիւններն ի յայտ են բերում քաղաքական իրազեկութիւն եւ պատմական մեծ արժէք ունեն: Արդարը ստանում եւ կարդում էր ոչ միայն հայկական եւ ճապոնական, այլեւ անգլիական, ամերիկեան եւ հնդկական մամուլ, նամակագրութիւն ունէր աշխարհի քաղաքական, հոգեւոր եւ այլ բնագաւառների երեւելի գործիչների հետ: Ինչպէս իրաւացիորէն նկատել է ճապոնացի ուսումնասիրող Հիդեհարու Նակաձիման, «Դիւանա Արգարը, որը 46 տարի ապրել էր հեռու Դապոնիայում, մեր կարծիքով, միակ հայ կինն էր, որ լիովին տիրապետում էր միջազգային իրավիճակին»<sup>6</sup>:

Այս գործերից բացի նա անգլերէնով հրատարակել է նաեւ *The Lonely Crusador* վէպը, *Կայսերապաշտութիւնը եւ Օրէնքը աշխատութիւնը*<sup>7</sup>, յօդուածներ ակադեմիական, քաղաքական եւ առեւտրական պարբերականներում, ինչպէս նաեւ մի շարք բանաստեղծութիւններ, որոնք լոյս են տեսել եւրոպական եւ ամերիկեան մամուլում, ի թիւս որոնց՝ «ՄՎ Ամերիկա, Առ Քեզ Գոչ է Արմենիա» բանաստեղծութիւնը<sup>8</sup>: 1921ին նամակով դիմել է Մարսէլում հրատարակուող *Արմենիայի* խմբագրութեանը, խնդրելով թերթի ճակատին տպագրել իր աղօթքը, որպէսզի ամէն հայ կարողանայ ձայնակցել իրեն.

«Որ Հայ ազգն ապրի,

Որ Հայաստան ազատուի,

Որ Հայոց Հանրապետութիւնն հաստատ մնայ,

Շնորհեա Տէր եւ ողորմեա»<sup>9</sup>:

Իսկ «Աստուած Պահպանեա Հայաստան» բանաստեղծութիւնը նա ուղարկել է Հայաստանի Հանրապետութեան ղեկավարներին՝ խնդրելով ամէն օր ընթերցել հայոց եկեղեցիներում<sup>10</sup>:

Դիւանա Արգարը Եոկոհամայում հրատարակել է նաեւ պամֆլետներ՝ *The Armenian Massacres* (1910), *The Anguish of the Near East* (1912), *The Murder of Armenia* (1916), *The American Mandate for Armenia; Armenia's Needs; The Armenian Republic*: Նրա վերջին գործը եղել է *From the Book of One Thousand Tales, Stories of Armenia and its People, 1892-1922* պատմուածքների ժողովածուն, որ 2004ին ԱՄՆում հրատարակել է նրա թոռնուհին՝ Լիւսիլ Արգարը<sup>11</sup>: Դրանք թէեւ գեղարուեստական գրուածքներ են, սակայն բոլորն էլ իրական

հիմք ունեն, ներկայացնում են հայ ժողովրդի կեանքն իր հայրենիքում, որոնք Արգարը լսել եւ գրի է առել Ճապոնիա հասած հայ փախստականներից:

Տեղեակ լինելով Հնդկաստանում բրիտանական կայսերապաշտութեան գործունէութեանը՝ Արգարը յստակօրէն նկատել է Օսմանեան կայսրութիւնում ապրող հայերի հանդէպ եւրոպական օգնութեան պակասը: Նա ցանկանում էր, որ ԱՄՆը մանդատաւոր (այսպէս կոչուած՝ խնամակալ պետութիւն) հանդիսանայ Հայաստանի համար, որը տեղի չունեցաւ: Կատարուեց ամէնից ահաւորը, Արգարի միլիոնաւոր հայրենակիցներ զոհ գնացին թուրքական եաթաղանին: Այդժամ իր կրթութեամբ, հարստութեամբ եւ հայրենասիրութեամբ թէ՛ հայերի, թէ՛ օտարների մէջ մեծ համբաւ վայելած Դիանա Արգարը փորձել է գործնականում օգտակար լինել ազգակիցներին եւ Հայաստանին, որտեղ նա երբեք չէր եղել: Հայրենի ժողովրդի հանդէպ ունեցած պարտքի զգացումից ելնելով՝ Դիանա Արգարն ամէն կերպ օգնել է բազմաթիւ հայ գաղթականների, որոնք Սիրիի եւ Ճապոնիայի վրայով ցանկացել են տեղափոխուել ԱՄՆ<sup>12</sup>: Միայն Վլադիվոստոկում 1910ականների վերջին 500 հայ է եղել, որոնց մի մասը մեկնել է Ճապոնիա՝ այնտեղից ԱՄՆ անցնելու համար: Վաւերական անձնագրից բացի երկիր մուտք գործող իւրաքանչիւր անձից ճապոնական իշխանութիւնները պահանջել են ունենալ նաեւ առնուազն 1500 եէն դրամ՝ մուրացկանութեամբ չգրադուելու եւ պետութեան վրայ բռն չդառնալու մտահոգութեամբ<sup>13</sup>:

Ժամանակակիցի վկայութեամբ, Ճապոնիայում «Ընդհանրապէս դէպի հայերը լաւ վերաբերմունք կայ, մինչ դէպի ռուսները միայն ատելութիւն է նկատուում»<sup>14</sup>: Այդ բարեհաճ վերաբերմունքի մէջ, անշուշտ, իր դերն է ունեցել նաեւ Դիանա Արգարը: Թողնելով իր ընդարձակ վաճառատան տնօրէնութիւնը՝ նա անձամբ է գնացել ճապոնական իշխանութիւնների եւ հիւպատոսների մօտ՝ կամաւոր կամ փախստական հայերի անցաթղթի խնդիրները կարգադրելու եւ նրանց ճանապարհորդութիւնը դիւրացնելու համար: Իր առեւտրական գործակալութիւնը նա օգտագործել է որպէս հայ գաղթականների դիւանագիտական առաքելութեան գրասենեակ, իսկ իր տունը՝ որպէս նրանց ժամանակաւոր ապաստարան: Նրա վկայութիւնների հիման վրայ թէ՛ ճապոնական իշխանութիւնները, թէ՛ եւրոպական հիւպատոսները անցաթուղթ են տուել հայ փախստականներին<sup>15</sup>: Ըստ 1919ին Արգարին այցելած ծնունդով ազուլիսցի վաճառական Թովմաս Եարդուլեանի վկայութեան, «տեղական ոստիկանութեան մօտ նրա մի խօսքը ատելի արժէ, քան որեւէ պաշտօնական անցագիր: Հայերի հետ որեւէ բիրիւսացութեան դէպքում տիկին Արգարին են դիմում, եւ նա անմիջապէս իր խօսքով, բարոյական ազդեցութեամբ, իր նիւթական միջոցներով օգնութեան է հասնում պատահաբար այդ կողմերն ընկած որեւէ հայի եւ նեղ դրութիւնից հանելով, խորհուրդներ է տալիս ու ճանապարհում ուզած ուղղութեամբ: Հեռաւոր Արեւելքի այս բախիղի մէջ տիկին Արգարը ներկայանում է որպէս մի մխիթարական դէմք նեղն ընկած, լեզուից եւ տեղական բարբերից անտեղեակ եւ ճանապարհը կորցրած պատահական հայի: Այնքան է նպաս-

տել նիւթապէս անցող դարձող հայերի, որ որդիքը սկսել են լրջօրէն բողոքել այդ անհաշիւ նպաստների դէմ: Շատ անգամ ամերիկեան կամ անգլիական ներկայացուցիչները տիկին Արգարի վկայութեան վրայ հիմնուած նպաստներ են տալիս եւ յարմարութիւն, որ այս կամ այն ճամբորդը կարողանայ հասնել Ամերիկա կամ Անգլիա: Յաճախ տիկին Արգարի դիմումի վրայ նաւային ընկերութիւնները այս կամ այն հայի ճամբորդութեան մեծ գեղջով (sic) տոմսակ են քաց քողնում: Տիկին Արգարը հայերէն լրագրեր է ստանում եւ մայրական հոգածութեամբ ամէն մի ճամբորդի դիւրութիւններ ընձեռելու հետ չի մոռանում եւ լրագրեր տալ, որպէսզի ճանապարհին ուրիշ լեզու չիմացող հայր զբաղի հայերէն լրագիր կարդալով»<sup>16</sup>:



1919ի Մայիսին Դիանա Արզարը մասնակցել է Խարրինում (Զինաստան) կայացած Սիրիբի եւ Մայրագոյն Արեւելքի Հայերի Համաժողովին, որտեղ նրան բնորել են պատուաւոր նախագահ: Համագումարի օրակարգի գլխաւոր եւ կարեւորագոյն հարցը եղել է Հայաստանին շուտափոյթ օգնութիւն հասցնելը: Այդ նպատակով կատարուել է հանգանակութիւն եւ յատուկ պատուիրակութեան միջոցով ուղարկուել Հայաստան<sup>17</sup>: Պատուիրակ Գրիգոր Զամոյեանը երբ Ճապոնիայով վերադարձել է Հայաստան՝ հիւրընկալուել է Դիանա Արզարի մօտ, որը նրան է յանձնել մետաքսից պատրաստուած 300 հատ եռագոյն դրօշ՝ Հայաստանի կառավարութեանը յանձնելու համար<sup>18</sup>:

1920ի Յուլիսին Դիանա Արզարը նշանակուել է Հայաստանի առաջին Հանրապետութեան դիւանագիտական ներկայացուցիչ՝ գլխաւոր հիւպատոս Մայրագոյն Արեւելքում: Այսպիսով, նա դարձել է աշխարհում դիւանագիտական պաշտօն գրադեցրած առաջին կինը<sup>19</sup>: Պահպանուել է 1922ի Յուլիսի 22ին Հայաստանի Հանրապետութեան Արտաքին Գործերի Նախարար Համօ Օհանջանեանի նամակը Դիանա Արզարին՝ վերջինիս պատուոյ հիւպատոս նշանակելու մասին:

«Յարգելի Տիկին,

Ինձ լաւ յայտնի է, որ Մայրագոյն Արեւելքում ոչ որ չի գործել այնքան, ինչքան Դուք, մեր նորածին Հայրենիքի շահերը պաշտպանելու եւ մեր հայրենակիցների ծանր վիճակը բերուացնելու համար: Նոյնպէս ինձ յայտնի է, որ այդ հեռու վայրերում ոչ մի հայ յունի այնքան մեծ հեղինակութիւն տեղացիների եւ մեր հայրենակիցների մօտ, ինչպէս Դուք, ուստի եւ Չեզ նշանակում եմ Հայաստանի պատուաւոր հիւպատոս ճապօնում եւ յուսով եմ, որ չէք մերժիլ ստանձնել այդ ծանր պաշտօնը յօգուտ մեր երիտասարդ հայրենիքին:

Սորա հետ միասին ուղարկում է Չեզ համապատասխան հատարարագիր. վստահ եմ, որ ճապոնական կառավարութեան կողմից ոչ մի արգելքի չէք հանդիպիլ ստանալու անհրաժեշտ "exequator" (դիւանագիտական փաստաթուղթ - Ա.Բ.)»<sup>20</sup>: Այս նամակի հետ մէկտեղ Արզարին ուղարկուել է նաեւ Ֆրանսերէն մի հաւաստագիր՝ վերջինիս պատուաւոր հիւպատոս լինելու վերաբերեալ<sup>21</sup>: Երեւանի Յառաջ օրաթերթին արդէն Յուլիսի 24ին հրատարակել է Արզարի՝ հիւպատոս նշանակուելու լուրը<sup>22</sup>: Ճապոնիան de facto ճանաչել է Հայաստանի Հանրապետութեան՝ հեշտացնելով Դիանա Արզարի մարդասիրական գործունէութիւնը եւ փախստականներին տրուող օգնութիւնը<sup>23</sup>:

Դիանա Արզարի հոգածութիւնը տարածուել է նաեւ Մայրագոյն Արեւելքի այլ երկրներում բնակուող հայութեան վրայ: Նրա հովանաւորութիւնն է վայելել Սինգապուրի հայ գաղութը եւ 1835ին կառուցուած Սուրբ Գրիգոր հայկական եկեղեցին: Նա օգնութեան ձեռք է մեկնել նաեւ Ինդոնեզիայի հայերին<sup>24</sup>:

Ժամանակակիցների վկայութեամբ՝ Դիանա Արզարը եղել է զարգացած, կրօնասէր, քաղաքականապէս տեղեկացուած, գթառատ, յստակ գործող անձնաւորութիւն: Այնքան տպաւորիչ արտաքին է ունեցել, որ երբ մուտք է գործել

դահլիճներ՝ բոլոր ազգերի ներկայ դիւանագէտները ոտքի են կանգնել: Հայերէնից եւ անգլերէնից բացի տիրապետել է Հինդի լեզուին եւ ճապոներէնին:

Այս ականաւոր կին գործչի դիմանկարն ամբողջանում է 1925ին Ճապոն-իայում նրան այցելած էջմիածնի պատուիրակ Ռուբէն Ծ. Վրդ. Մանասեանի Ամենայն Հայոց Գէորգ Ե. Կաթողիկոսին (Գէորգ Ե. Տփիսիսեցի, գահակալել է 1911-1930ին) 1925ի Դեկտեմբերի 30ին գրած նամակով, որտեղ ի միջի այլոց գրուած է.

«Ճանապարհորդութեանս ընթացքում Հայ համայնքների մէջ, հանդիպեցի այնպիսի անհատների, որոնք բացառիկ դիրք ունեն եւ խոշոր դեր են կատարում մեր գաղութային-ազգային հասարակական կեանքում:

Այդ անհատներից է Ջափոնիայի Կոբէ քաղաքում ապրող Տիկ. Դիանա Աղաբէկ Արզարը, որը աչքի ընկնող դիրք է գրաւել, ոչ միայն Հայ շրջաններում, այլ եւ Ջափոնական քաղաքական եւ հասարակական ասպարէզում:

Տիկին Արզարը եղել է Հայաստանի հանրապետութեան դեսպանը Ջափոնիայում, որպիսի պաշտօնով նա ամենալայն չափով աջակցութիւն է ցոյց տուել այդ շրջաններում քնակութիւն հաստատած Հայերին, անկախ դրանց բոլոր ճանապարհորդներին, որոնք Ջափոնիայի վրայով անցել են Ամերիկա կամ դէպի Հայաստան, տուել է ամէն դիւրութիւն եւ յարմարութիւն, իսկ չքաւորներին օժանդակելով դրանով, որով մեծ դիւրութիւններ է ստեղծել շատ ու շատ գաղթականների Ամերիկա անցնելու:

Տիկ. Դիանա Արզարը չէ եղել հարուստ, երկար տարիներ ապրելով Ջափոնիայում, մի երկրում, որտեղ օտարների համար փակուած է ամէն մի ապրուստի աղբիւր, շնորհիւ իր լեզուագիտութեան եւ ստատր ընդունակութիւնների կարողացել է ապրուստի միջոց ստեղծել, հասարակական աչքի ընկնող դիրք գրաւել:

Նա Հեռուոր Արեւելքի իշխանուիւն է, որին դիմում են ամէնը թէ՛ անձամբ եւ թէ՛ գրաւոր եւ բաւարարում նրա խորհուրդներից:

1923 թի Ջափոնիային հասած մեծ աղէտի՝ երկրաշարժի ժամանակ, երբ կրակի ճարակ դառնալով կործանում է Եակոհամա (sic) քաղաքը, կոտորում է հարիւր հազարաւոր խաղաղ ազգաբնակչութիւն<sup>25</sup>, Տիկ. Արզարը նախախնամութեան շնորհիւ անփութ ազատում է իր ամբողջ գերդաստանով, սակայն կորցնում է իր ունեցածքը եւ միանգամայն ընչազուրկ փախչում է Կոբէ իր ամբողջ գերդաստանով, ուր եւ ապրում է այժմս:

Չնայած իր պատկառելի հասակին, Տիկ. Արզարը առոյգ է եւ առողջ դատողութեան տէր, հետաքրքրութեամբ հետեւում է Հայաստանի այժմեան շինարարութեան<sup>26</sup> եւ առանձին սիրով յիշում է Ս. Էջմիածինը, ցատում էր Հեռու Արեւելքի կրօնական անմխիթար վիճակի վրայ, եւ խնդրում էր, որ Էջմիածինը յատուկ ուշադրութիւն դարձնի Հեռու Արեւելքի կրօնական կեանքին:

Տիկ. Արզարը ունի երկու դուստր եւ մէկ որդի, որոնցից մեծ դուստրը անուանացել է Նոր-Ջուղայեցի Պ. Սամուէլ Գալստեանի հետ, ունի երեք թոռ, իսկ որդուն անուանացրել է հայ օրիորդի հետ եւ ունի մէկ թոռ տղայ, որին մկրտեցի Ջափոնիայում եղած ժամանակ:

Տիկ. Աբգարը իր բարի սրտով, ոչ միայն գործվագութ ւնայր է իր գերդաստանի, այլ եւ մայրն է Հեռու Արեւելքի ամբողջ Հայութեան, մասնատրապէս դէպի ինձ, որպէս Ս. Էջմիածնի ներկայացուցչի ոչ միայն Ջափոնիայում առանձին ուշադրութեան արժանացրեց, այլ եւ իր նամակներով, հեռագրերով եւ բարի խորհուրդներով նպաստեց իմ գործի յաջողութեան:

....Վերոյիշեալի մասին ամենախոնարհաբար գեկուցանելով, համարձակում եմ Չերդ Ս. Օծութեան ուշադրութեանը արժանացնել Տիկ. Դիանա Աղաբէկ Աբգարին եւ խնդրել նրան շնորհելու յիշեալ Տիկնոջ Օրհնութեան Կոնդակ, որով իր կեանքի վերջին տարիներում հոգեպէս մխիթարուած կը զգայ, ի վարձատրութիւն այն բարութեան, որ Տիկ. Դիանա Աբգարը արել է եւ անում է հանդէպ Հայ ժողովրդի»<sup>27</sup>:

*Ամենայն Հայոց Գէորգ Ե. Կաթողիկոսը, ըստ արժանւոյն գնահատելով Աբգարի գործունէութիւնը, 1928ին նրան արժանացրել է յատուկ կոնդակի՝*

*Ստորեւ այն.-*

«Գէորգ ծառայ Յիսուսի Քրիստոսի

Մեծարգոյ եւ համեստափայլ Տիկին Դիանա Ա. Աբգարի,

Հարազատ դստեր Մայր Աթոռոյս

ողջոյն եւ օրհնութիւն Հայրապետական

Քաջայայտ էր մեզ յանցելում, եւ յայժմիս եւս գոհունակութեամբ սրտի իրագել եղաք ի գրութենէ Տ. Ռուբէն ծայրագոյն վարդապետի, զի Դուք ի Հեռաւոր Արեւելս ոչ երբեք մոռանայք զհայրենիքս մեր՝ զՀայաստան աշխարհ եւ զՄայր Աթոռ Սուրբ Էջմիածին, այլ եւ հանապազ ցուցանէք բանիս եւ գործով գտէր եւ զհամակրանս Չեր՝ առ ազգային հաստատութիւնս մեր եւ մասնակից լինէք ազգային եւ հասարակական գործոց մերոց: Մխիթարութիւն է Հայրապետիս հանուրց Հայոց՝ տեսանել զհոգեւոր սիրելի դստերս մեր՝ զարդարեալս գործովք բարութեան եւ շողկապետալս հոգեւոր սիրով եւ զգացմամբ առ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, յորոց եւ Դուք հանդիսանայք յայդմ հեռաւոր աշխարհի: Գոհունակութեամբ իրագել եղաք նաեւ, զի Դուք, գոր բնածին բարի բարուց Չերոյ եւ ըստ ցերմեռանդութեան, օժանդակ եւ սատար լեալ էք խորհրդովք եւ գործովք Չերովք ներկայացուցչի Մայր Աթոռոյս Տ. Ռուբէն ծ. վարդապետի, զոր առաքեսցաք Հայրս տիրական կոնդակաւ մերով առ գաւակունս մեր, բնակեալս ի Հեռաւոր Արեւելս, ի հոգեւոր այցելութիւն եւ ի կրօնական մխիթարութիւն:

Արդ, ի նկատ առեալ Չեր զօգտաւէտ գործունէութիւնն եւ զկենդանի հաւատս եւ գտէրն Չեր առ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, այսու հայրապետական կոնդակաւս օրհնենք զՉեզ ի բոլոր սրտէ մերմէ, օրհնենք զգերդաստանն Չեր՝ զսիրասուն գաւակունս եւ զբոռունս Չեր, մաղթելով ի Տեառնէ պարգեւել ամենեցունդ կեանս բարեբաստիկս եւ երջանիկս:

Յորդորենք զՉեզ, հոգեւոր դուտր Մայր Աթոռոյս, այսպէս եւս ընթանալ ընդ նոյն ճանապարհ բարութեան եւ քրիստոնէական սիրոյ եւ դաստիարակել

գաիրելի գաւակունս եւ գրոտունս Չեր ի նոյն ոգի հայրենասիրութեան, ազգասիրութեան եւ կրօնասիրութեան:

Տէր Աստուած օրհնեացէ զամենեսեանդ եւ պահպանեացէ զձեզ ի փորձանաց, ամէն:

24 Ապրիլի 1926 թ.

Ս. Էջմիածին»<sup>29</sup>:

*Դիանա Աղարէկ Արզարը վախճանուել է 1937 Յուլիսի 8ին, Եոկոհամալում: Թաղուած է տեղի օտարերկրացիների գերեզմանատանը<sup>30</sup>, ամուսնու չիրիմի կողքին: Նրա մարմարեայ տապանաքարին հայերէն եւ անգլերէն գրուած է հանգուցեալի անունը.*

"DIANA AGABEG APCAR.

October 17th 1859 – July 8th 1937.

Out of Earth's Shadows unto Heaven's Glorious Day.

We Loved Her, but God Loved Her Best"<sup>31</sup>:

*Այսօր Արզարի շիրիմը գտնուում է Տոկիոյում գործող Ճապոնա-հայկական բարեկամութեան ընկերութեան հոգածութեան ներքոյ:*

*Դիանա Արզարի սերունդներն ապրել են ԱՄՆում: 1929ին Սան Ֆրանսիսքօ են տեղափոխուել Ռոզ դուստրը՝ ամուսնու՝ Սամուէլ Գալստեանի եւ որդու՝ Կորիւնի հետ: Վերջինս յայտնի էր Լայոնէլ Գալստոն անունով որպէս փիլիսոփայ եւ քիմիկոս<sup>32</sup>: Միւս դուստրը՝ Ռութը, ԱՄՆ է տեղափոխուել 1939ին, իսկ Միքայէլ Արզար-կրտսերը՝ 1945ին<sup>33</sup>: Հայկական ոգով մեծացած Դիանա Արզարի գաւակները յետագայում աշխոյժ գործունէութիւն են ծաւալել Ամերիկահայ Օգնութեան Խաչի եւ եկեղեցական շրջանակներում:*

*Հայաստանի Ազգային Արխիւում պահուող Դիանա Արզարի սոյն նամակները թէեւ մեծ մասամբ մաղթանքներ եւ էջմիածնին ուղղուած շնորհակալագրեր են՝ հիմնականում օրացոյցներ ստանալու վերաբերեալ, սակայն նկատի ունենալով, որ շատ քիչ մասունքներ են պահպանուել Դիանա Աղարէկ Արզարից՝ նպատակալարմար գտանք դրանք հրատարակել: Ուրոյն հետաքրքրութիւն է ներկայացնում նաեւ նամակների լեզուն՝ ԺԹ. դարում հեռաւոր Արեւելքում ծնուած հայուհու գրաւոր գրաբարախառն աշխարհաբարբ: Նամակների շարադրանքի մէջ կատարել ենք ուղղագրական եւ կէտադրական անհրաժեշտ շտկումներ:*

Ա.<sup>34</sup>

Կօթ. Մայիս 9–1925

Կարոտիկոս Ամենայն Հայոց

Էջմիածին

Հայ Ազգի Հոգեւոր Հայր,

Մեծ պատիւ համարեմ, որ այս նամակն Ձեր վեհափառս գրեմ եւ յայտնեմ իմ սրտի եռանդն դէպի Էջմիածին եւ Ձեր արժոյն, որն Աստուած պահապանի եւ հաստատուն պահի Հայ ազգի համար:

Տեղոյցս որով միջոց չունենալով պարտաւորեալ Հարքինէն պարոն Կարապետ Ասպետեանի միջոցաւ ուղարկեցի մի փոքրիկ նուէր Էջմիածնի նորոգման 80 ոսկի ուրբիս. ցաւեմ ի սրտէ, որ իմ նիւթական կարողութիւնն էվէ չի խոստանում, ինչպէս արդէն Ռուբէն վարդապետին յայտնի է:

Ռուբէն վարդապետն եկաւ տեղս եւ իւրն շատ սիրով ստացանք, անպատճառ որ Հայ գաղութն որ այցելի, պիտի իւրն նոյն սիրով եւ յարգանքով ստանան:

Հայ գաղութներին շատ պէտք է, որ Էջմիածնի հետ կապացոյցութիւն ունենան, որ այդպիսով ազգային զգայուն ջերմ մնայ ցրուած հայերի հոգու մէջ:

Խոնարհութիւն մատուցանելով իմ եւ իմ զաւակաց

Գիանա Ա. Արզար<sup>35</sup>

Բ.<sup>36</sup>

Մեծապատիւ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդ

ի՛ Սուրբ Էջմիածին

Բազում շնորհակալութեամբ ստացայ Հինգ հատ օրացոյց, մի հատ ինձ համար պահեցի եւ չորս հատ բաժանեցի:

Կրկին բազում շնորհակալութիւն:

Մնամ խոնարհութեամբ

Գիանա Ա. Արզար

Եօկօհամա, Մարտ 25-1926<sup>37</sup>

Գ.<sup>38</sup>

Սրբազան Բարձրագոյն Պատրիարք Եպիսկոպոսապետ եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց ՚ի Սուրբ Էջմիածին:

Խորին խոնարհութեամբ այս նամակն գրեմ Ձեր Սրբազնութեան եւ Հայրապետութեան, խնդրելով, որ Ձեր Հայրապետական խնամքն չպակասի Ձեր տառապեալ, վշտեալ եւ տարակուսեալ հօտի վերայ, որ Հայաստանէն, Սիբիրի վերնով հասել են Ջապոնիա, որ գնան Ամերիկա եւ անդ միանան իւրեանց մերձաւոր ազգականների հետ, բայց տեղս մնացած են տառապեալ եւ տարակուսեալ:

Սրբազան Հայ ազգի Հայրապետ, Ձեր հօտն շատ տանջուած է այս օտար արքայութեամբ:

Ամերիկեան հիւպատոսն պահանջի ծննդեան վկայականք եւ սորա ծնուած լինելով հանրապետութեան սահմանի մէջն, որ հողն, Ամերիկեան տէ-

րութիւնն ճանաչի որպէս «Արմէնիա», կուգեմ սոցա ծննդի վկայական Մայր եկեղեցու արձոյց, Սուրբ Էջմիածնի շաքն (ինչ որ կասեն Անգլերէն seal) լինի քուղթի վերա, եւ Ձեր ձեռագրութիւն որպէս Հայրապետ եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց, կամ ում որ Ձեր Սրբազնութիւնն կընտրի որպէս փոխարէն, այսինքն «Գերագոյն Հոգեւոր Խորհուրդ» այնքան լինի, որ Մայր եկեղեցուց վկայականը ունենամ, որ ցոյց տամ Հիւպատոսին: Ներփակեմ օրինակներ ինչպէս վկայականը ուզեմ եւ կրկին խնդրեմ, որ Ձեր հայրապետական խնամքն լինի Ձեր յուսահատ հօտի վերայ:

Մնամ խորին խոնարհութեամբ  
Դիանա Ա. Արզար

Եօկօհամա, Մարտ 25-1926<sup>39</sup>

Գ.<sup>40</sup>

Վեհափառն Եպիսկոպոսապետ, Ծայրագոյն Պատրիարք եւ Կաթողիկոս  
Ամենայն Հայոց ՚ի Սուրբ Էջմիածնի

Ձեր Վեհափառութեան աջն համբոյրելով յայտնեմ խորին շնորհակալութիւնս վասն օրհնութիւնով եւ ողջոյն, որ Ձեր վեհափառութիւնն շնորհել է ինձ պարգեւել եւ որն ստացայ ուրախութեամբ եւ գոհութեամբ<sup>41</sup>:

Որդիս եւ երկու դստերս (sic), հարսս, փեսես եւ բոռներս ընդ զիս համբոյրեն Ձեր Վեհափառութեան աջն:

Խորին խոնարհութեամբ  
Դիանա Ա. Արզար

՚ի Եօկօհամա  
Յունիս 8-1926

ակնկալ սպասեմ վասն ծննդական վկայականը գորն խնդրուած եմ:

Ե.<sup>42</sup>

՚ի Եօկօհամա, Ջապոն  
Փետրուար 24-1929

Վեհափառ Հայրապետ Ամենայն Հայոց եւ Սրբազան Գերագոյն Հոգեւոր  
Խորհուրդ  
Սուրբ Էջմիածին:

Յոյժ շնորհակալութեամբ ստացայ երկու օրինակ 1929 թուի օրացոյցի եւ մեծապէս գոհ եմ, որ ինձ մտաց պահէք, եւ միշտ Ձեր բարձր շնորհն ինձ վրայ է:

Ամենայն աւուրս աղօթեմ առ Աստուած, որ Տէր ինքն պահապանի Սուրբ Էջմիածին, մեր Վեհափառ Հայրապետ եւ Ս. Էջմիածինի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը:

Մնամ խորին խոնարհութեամբ  
Դիանա Ա. Արզար

Զ.<sup>43</sup>

Մեծապատիւ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդ Սուրբ Էջմածինի

Պատիւ համարեմ այս նամակն գրել եւ մատուցանել իմ խորին շնորհակալութիւնը վասն օրացոյցն եւ նամակի պարունակուած մաղբանքն, որ ինձ համար շատ պատուական է:

Աղօթում եմ ամենայն աւուր կենաց իմոյ վասն Սուրբ Էջմիածինի հաստատուն պահպանութեան. ոչ թէ միայն ես եմ աղօթում, բայց անշուշտ հազարաւոր արտասահմանի հայեր, աշխարհիս որ անկիւնում որ տարածուած են, պիտի աղօթեն:

Մնամ խոնարհութեամբ  
Դիանա Ա. Արզար

՚ի Եօկօհամա  
Յունիս 6-1932

Է.<sup>44</sup>

՚ի Եօկօհամա  
Մայիս 14-1935

Վեհափառն Հայրապետ Ամենայն Հայոց եւ Մեծապատիւ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդն Ս. Էջմիածին:

Մատուցանեմ իմ խոնարհութիւն եւ շնորհակալութիւն:

Գոհ եմ, որ ինձ չէք մոռանում այս հեռու եւ օտար ափում:

Կարօտ մնացած եմ իմ եկեղեցու ժամերգութիւններից եւ Սուրբ Պատարագի հաղորդութեան:

Հոգովս սիրել եմ իմ եկեղեցին, բայց կարօտ մնացել եմ:

Շնորհակալ եմ վասն օրացոյցն, որ ինձ ուղարկել էք:

Ուշացաւ այս նամակս գրելս հիւանդութեան պատճառի:

Մնամ հաւատարիմ դուստր Հայաստանի եկեղեցոյ:

Դիանա Ա. Արզար

Վեհափառն Հայրապետ Ամենայն Հայոց եւ Մեծապատիւ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդն Ս. Էջմիածին:

Պատիւ ունեն ընդունել ստանալ Մեծապետ շնորհակալութեամբ Ձեր յարգելի նամակն 24 Փետրուարի, եւ գոհութեամբ յայտնեն իմ գնահատութիւնս վասն հայրապետական օրհնութեան, որն քանկագին է ինձ համար:

Ամենայն առաօտ աղօթեմ առ Աստուած, որ աջ Տեառն պահապան լինի Սուրբ Էջմիածնին եւ Հայրապետական արքովի վերայ:

Աշխարհ դատարկ է եւ ունայնութիւն: Մնաց մեզ միայն Հաւատ, Յոյս, Սէր: Եկեղեցին է մեր հաստատութիւնը:

Շնորհակալութեամբ եւս ստացայ երեք օրինակ օրացոյց. մի օրինակ ուղարկեցի Ամերիկա, մի Կօթէ եւ մինն պահեմ ինձ համար:

Մնամ խոնարհութեամբ

Դիանա Ա. Արզար

#### ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- <sup>1</sup> Մենք ընդհանրապէս Արզարի անունը գրում ենք Դայանա, սակայն այս անգամ ընդունեցինք Դիանա ձեւը, քանի որ Արզարն ինքը իր անունը հայերէն գրել է այդպէս:
- <sup>2</sup> Արզարի կենսագրական տուեալները մեծ մասամբ վերցրած են հետեւեալ աղբիւրից՝ Isabel Kaprielian, Chad Krikorian, "Diana Apar - Writer, Diplomat, Humanitarian," *Hye Sharzhum*, May, 1999:
- <sup>3</sup> Վերջին հրատարակութիւններում Դիանա Արզարի ծննդավայր միշտ նշում է Ռանգունը, սակայն նախկինում մեծ մասամբ նշուել է Նոր Ջուղան (տե՛ս՝ Ա. Վ. (Միմոն Վրացեան - Ա.Բ.), «Տիկ. Տիանա Արզար», *Հայրենիք Տարեգիրք*, 1945, էջ 150, նաեւ՝ Գառնիկ Ստեփանեան, *Կենսագրական Բառարան*, հատոր Ա., Երեւան, «Հայաստան» Հրատարակչութիւն, 1973, էջ 9, նաեւ՝ Սոնա Չէլքիւեան, *Հայ Կնոջ Դերը Հայ Յեղափոխական Շարժման Մէջ*, Լոս Անճելըս, Քալիֆորնիա, 1992, էջ 200):
- <sup>4</sup> *Դիան Մեսրոպ Դ. Թաղիաղեանի*, խմբ. Մեսրոպ եպս. Աշճեան, Նոր Ջուղա, 1979, էջ 585:
- <sup>5</sup> Տե՛ս՝ այս գրքի մի հատուած հայերէն քարգմանութեամբ՝ Տայանա Արզար, «Կոտորածներ եւ Հայոց Ապագան», *Կոչմակ*, 23.10.1910, ք. 17, էջ 396-397:
- <sup>6</sup> Հիղեհարու Նակաձիմա, «Մտորումներ Եոկոհամայի Արտասահմանցիների Գերեզմանատանը՝ Դայանա Արզարի Շիրմաքարի Մօտ», Ն. Հ. Յովհաննիսեան եւ ուրիշ. (խմբ.), *Հայաստան-Ճապոնիա Ժողովածու, Քաղաքական, Տնտեսական, Մշակութային, եւ Գիտական Յարաբերութիւններ*, Երեւան, «Չանգակ-97», 2005, էջ 175: Արզարի աշխատութիւններում արտայայտուած նկատառումների մասին տե՛ս՝ նոյն տեղում, էջ 175-178: Արզարի գրութիւններն, անշուշտ, կատարել են իրենց դերը՝ ճապոնական հասարակութեանն իրազեկ են դարձրել հայոց ցեղասպանութեան մա-

սին: Այս իրողութեան մի ապացոյց կարող է լինել հետեւեալ փաստը: 1919ին բուրբական *Թասֆիր* քերթն աշխարհի շոքս կողմից ի վնաս հայոց փաստեր է հաւարել, նաեւ հարցրել է Կ. Պոլսում գտնուող մի ճապոնացու: Վերջինս պատասխանել է. «Շատ պատմութիւններ հասկցուցին Հայկական Զարդերու մասին: Ձեռ կրնար պնդել թէ Թուրքերը անմեղ են: Իր պատմութիւնը ունենալու է այդ. հարկաւ դուք այլ կեցած տեղերնիդ չջարդեցիք եւ: Խառն ցեղերով երկիր մը վարելը դժուար է: Միայն ձեզի խրատ մը տամ: Եթէ չէք ուզեր որ ասկէջ վերջ Եւրոպայի առջեւ ամբաստանութեան տեղի տաք, ջանացէ՛ք կարելի եղածի չափ յարմարիլ ոչ-խալամ տարրերուն հետ» («Ճարոն, Թասֆիր եւ Հայերը», *Վերջին Լոյս*, 30.04.1919):

<sup>7</sup> Յատը, այս մէկի անգլերէն վերնագիրը մեր տրամադրութեան տակ շկայ. *Imperialism and Law* գուցէ՞:

<sup>8</sup> Լոյս է տեսել *The Seattle Sunday Times* պարբերականում (19.01.1919, արտատպուել Նիւ Եորքի *Կոչնակ*ում, 20.12.1919, էջ 1537): Հայերէն կրճատ տարբերակը լոյս է տեսել ժամանակի հայ մամուլում.

*Ի մէջ Հզօրին եւ անզօրին,*

*Աստուած կայ յօգն եւ ի նպաստ.*

*Յարեւելից մինչ ի մուտս իշխէ Աստուած:*

*Ո՛հ, ո՛վ Արեւմուտք, ուր ժողովուրդն է իշխան,*

*Թերեւս Աստուած գոչէ զքեզ յօգնել փութով*

*Երկրին Արեւելեայց, ուր արհաւիրքն իշխան:*

*Ո՛հ, երկիր Արեւմտեայց, ո՛հ ազա՛տ աշխարհ,*

*Ո՛վ Ամերիկա, առ գոչէ Արմենիա: (Հայ Կին, ք. 3, 1.12.1919, էջ 39, նաեւ՝*

*Տարոս*, 1919, էջ 427):

<sup>9</sup> «Հայ Կնոջ Աղօթքը Հեռաւոր Դափոնի Մէջ», *Արմենիա*, 18.05.1921:

<sup>10</sup> Բանաստեղծութիւնը լոյս է տեսել 1919ին, *Տարոս* հանդէսում (էջ 645), 1921ին՝ *Նոր Չորայի Ամենափրկիչ վանքի օրացոյցում* եւ վերահրատարակուել 1979ին (տես՝ Լեւոն Գ. Մինասեան, «Հայաստանի Հանրապետութեան Հիպատոս Տկն. Դիանա Արգար», *Նոր Չորայ Տեղեկատու*, 1979, Յուլիս, էջ 29: Նոյն յօդուածում (էջ 28) նշուած է, որ Ամենափրկիչ վանքի արխիւում պահուած են Դիանա Արգարից մի շարք նամակներ՝ ուղղուած ժամանակի բնակալ առաջնորդին, Համայնական Խորհրդին եւ Եզնիկ վարդապետին: Մենք նամակով խնդրեցինք Լեւոն Մինասեանին՝ մեզ տրամադրել այդ նամակների պատճենները. մեծարգոյ բանաստեղծ տեղեկացրեց, որ առայժմ անհնար է դրանք գտնել:

<sup>11</sup> Տես՝ Sarah Soghomonian, "Lucille Apcar Introduces New Book", *Hye Sharzhum*, December 2004: Տես՝ գրքի գրախօսականը՝ Edward Alexander, "Diana Agabeg Apcar's "From the Book of 1000 Tales," *The Armenian Reporter Int'l*, 30.04.2005:

<sup>12</sup> Այդ հայերի մէջ է եղել Յովհաննէս Տէր-Յովհաննիսեանը՝ ամերիկահայ անգլիագիր բանաստեղծուի Դայանա Տէր-Յովհաննիսեանի հայրը, որին Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը ուղարկել է Դապոնիա՝ գիւղատնտեսութիւն ուսանելու: Հայաստանի խորհրդայնացումից յետոյ չկամենալով վերադառնալ Հայաստան՝ Տէր-Յովհաննիսեանը տեղափոխուել է ԱՄՆ (անձնական ելմակ Դայանա Տէր-Յովհաննիսեանի հետ, 17.11.2006): Յետագայում նա իր դատերն անուանել է Դայանա՝ ի պատիւ Դայանա Արգարի: Այս իրողութիւնը յիշատակուած է Դայանա Տէր-Յովհաննիսեանի երկու բանաստեղծութեան մէջ (տես՝ Diana Der Hovanesian, "My Name," *Any Day Now*, Sheep Meadow Press, New York, 1999, էջ 67):

<sup>13</sup> Տե՛ս՝ «Կեանքը Հեռու Վլադիվոստոկում», *Յառաջ*, 18.07.1920:

<sup>14</sup> Նոյն:

<sup>15</sup> Տե՛ս՝ «Հայաստանի Հիպատոստիին Ճարմնի Մեջ», *Արմենիա*, 18.08.1920: Մեծ Երեւոնից մազապուրծ ԱՄՆի քաղաքացի Յարութիւն Թաշճեանը կնոջ եւ դստեր հետ 1915ին Խարբերդից փախել է Ռուսաստան, ապա հասել Սիբիր եւ Վլադիվոստոկ, որտեղից նրանց ուղարկել են Ճապոնիա՝ Տոկիո եւ Եոկոհամա: Այստեղ նրանք յայտնուել են ճապոնական ոստիկանութեան կասկածի ներքոյ, որոնք Ռուսաստանից եկած հայերին կասկածել են, թէ բոլշեփկեան լրտեսներ են: Այդժամ նրանց գտել է Դիանա Արզարը, որը Սանբոյեան ազգանունով շանհայցի մի հայ օրիորդի եւ Ճապոնիայում ամերիկեան հիպատոսի ընկերակցութեամբ անձամբ գնացել է Թաշճեանների մօտ եւ նրանց յայտնել, որ իրենց կ'ուղարկեն Կանադա, որտեղից էլ նրանց երկաթուղու ճանապարհով կը ճանապարհեն Միացեալ Նահանգներ: Թաշճեանների մեկնելուց յետոյ էլ Արզարը հետաքրքրուել է նրանց ճակատագրով (տե՛ս՝ James H. Tashjian, "A Scant Codicil to the Diana Aparcar Exhibit," *Armenian Weekly Online*: July 2004):

<sup>16</sup> «Կեանքը Հեռու Վլադիվոստոկում»:

<sup>17</sup> «Համբարձում Պսակեան, Հանդիպումներ Եւ Պատահարներ», *Հայրենիք*, 1963, քիւ 1, էջ 77-78:

<sup>18</sup> «Հայաստանի Ներկայացուցիչը Սիբիրում», *Յառաջ*, 31.08.1920:

<sup>19</sup> 1922ին Լոնդոնից տեղեկացրել են, որ առաջին կինը, որ դիանագիտական պաշտօնի է նշանակուել, Լոնդոնում Բուլղարիայի դեսպանի 28ամեայ դուստրն է, որը որպէս քարզման աշխատել է տարրեր երկրներում եւ նշանակուել է բուլղարական կառավարութեան առաջին քարտուղար Վաշինգտոնի բուլղարական պատուիրակութեան մէջ (տե՛ս՝ *Հայ Կին*, 16.07.1922, էջ 1065): Յաջորդ տարի՝ 1923ին Ալեքսանդրա Կոլոնտայը (1872–1952) նշանակուել է Նորվեգիայում ԽՍՀՄի մշտական ներկայացուցչութեան ղեկավար՝ դառնալով աշխարհում առաջին կին դեսպանը:

<sup>20</sup> Հայաստանի Ազգային Արխիւ (ՀԱԱ), ՊՖՅՈՆ 200, ցուցակ 1, գործ 610:

<sup>21</sup> Այդ փաստաթղթերը պատրաստուել եւ ուղարկել են Երեւանից Ճապոնիա մեկնող Գորոյեան ազգանունով մեկի ձեռքով, ինչպէս վկայել է Համօ Օհանջանեանը 1920ի Յուլիսի 21ին (տե՛ս՝ ՀԱԱ, նոյն տեղում): Դրանից մեկ օր առաջ արդէն Հայաստանի Արտաքին Գործերի Նախարարութիւնը Դիանա Արզարին գրել է մեկ այլ նամակ, որտեղ նշուել է. «Ճապոնը միշտ եղել է այն պետութիւնների շարքում, որոնք ցոյց են տուել մեզ իրանց ջերմ համակրանքը եւ աջակցութիւնը եւ անմիջապէս ճանաչել է մեր Հանրապետութեան անկախութիւնը: Ուստի Մինիստրութիւնս պատիւ ունի խնդրելու Ձեզ, համաձայն Պ. Վարդապետի կարգադրութեան, Հայաստանի կառավարութեան անունից ուղղել ջերմ շնորհակալութիւններ Նորին Կայսերական Մեծութեան Միկադոյի Կառավարութեանը: Սորա հետ միասին ուղարկուում է Ձեզ Հայկական Պետական Զինանշանի օրինակը» (ՀԱԱ, նոյն տեղում):

<sup>22</sup> «Երկրորդից, Իօզա Համա (sic) քաղաքում, Հայաստանի Պատուաւոր Հիպատոս նշանակուել է յայտնի կին գործիչ Դիանա Աղարէկ Արզարը: Դիանա Աղարէկ Արզարն Երկրորդում, թէ պետական դէմքերի շրջանում եւ թէ հայ գաղութի մէջ համակրանք է վայելում» (Լրատու, *Յառաջ*, 24.07.1920):

<sup>23</sup> Richard G. Hovannisian, *The Republic of Armenia*, vol. III, University of California Press, 1996, էջ 439:

<sup>24</sup> Զէյրլեան, էջ 202:

- <sup>25</sup> 1923ի Սեպտեմբերին գրուել է, որ Եոկոհամայի մի քանի հարիւր հազար բնակիչներից մնացել է միայն 40 հազարը, մնացածը կամ փախել է, կամ զոհուել («Ճափոնի Աղետը Կը Մեծնայ», *Հայրենիք*, 6.09.1923):
- <sup>26</sup> Այս վկայութիւնը հակասում է Ձէյրլեանի պնդումին, որ «Համայնավար իշխանութեան Հաստատումը խոր վիշտ պատճառեց Հայրենասէր Հայուհիին» (Ձէյրլեան, էջ 202):
- <sup>27</sup> ՀԱԱ, ՊՖոնդ 409, ցուցակ 1, գործ 4668:
- <sup>28</sup> քնօրինակը տես՝ ՀԱԱ, ՊՖոնդ 409, ցուցակ 1, գործ 4671:
- <sup>29</sup> Տես՝ ՀԱԱ, ՊՖոնդ 409, ցուցակ 1, գործ 4671:
- <sup>30</sup> Եոկոհամայի օտարերկրացիների գերեզմանատան վերաբերեալ մանրամասն տես՝ Evgeny Steiner, *Bez Fudziyami: Yaponskie Obrazi I Voobrazhenia* (Առանց Ֆուձիամայի. ճապոնական կերպարներ եւ պատկերացումներ), Մոսկուա, 2006, էջ 107-118, 179-181, 311-313:
- <sup>31</sup> Նակաձիմա, էջ 170:
- <sup>32</sup> Փիլիսոփայ եւ քիմիկոս Լայոնէլ Գալստոնը (Կորիւն Գալուստեան, Galstaun) ծնուել է 1914ին, Ճապոնում, մահացել 2002ին, Նիւ Եորքում: Սամուէլ եւ Ռոզ Գալստեանների որդին մանկուց բնակուել է Եոկոհամայում, որտեղ ստացել է նախնական կրթութիւնը, սովորել անգլերէն, ֆրանսերէն, ճապոներէն: Որոշ ժամանակ ուսանել է Ճապոնիայի Ամերիկեան Երկրորդական Դպրոցում: 1929ին հաստատուել է ԱՄՆում, ուսումը շարունակել Դէյթոնի Օհայօ Համալսարանում, որտեղ ստացել է Փիլիսոփայութեան Դոկտորի աստիճան: Յետագայում մասնագիտացել է նաեւ քիմիայի մէջ՝ արժանանալով Քիմիագիտութեան Դոկտորի աստիճանի: Ամուսնացած է եղել ամերիկահայ դաշնակահարուհի Մարօ Աճեմեանի (1922-1978) հետ: Եղել է *Ararat* գրական եռամսեայ հանդէսի խմբագրական խորհրդի երկարամեայ անդամ:
- <sup>33</sup> Երբ 1941ին սկսուել է ամերիկա-ճապոնական պատերազմը, ճապոնացիները Միքայէլ Արզար-կրտսերին համարել են թշնամի եւ բանտարկել են: Նոյն թուականին մահացել է նրա դուստրը՝ Դորոթին: 1942ին ընտանիքն արտորուել է Կարոլիճասա, որտեղ էլ մնացել է մինչեւ 1945ը: Նոյն թուականին ԱՄՆից Ճապոնիա է գործուղուել Լայոնէլ Գալստոնը, որն աշխատել է ամերիկեան ոմբակոծութիւնների հասցրած վնասը ուսումնասիրող խմբում: Նա գտել է մօրեղօրը եւ նախապատրաստել նրանց տեղափոխումը ԱՄՆ (Նակաձիմա, էջ 174):
- <sup>34</sup> ՀԱԱ, ՊՖոնդ 409, ցուցակ 1, գործ 4667, վաւերագիր 1:
- <sup>35</sup> Սոյն նամակի պատասխան շնորհակալագիրը, գրուած էջմիածնում 1925ի Յունիսի 23ին, Ճապոնիա է ուղարկուել խարբինցի Կարապետ Ասպետեանի միջոցով: Տես այդ գրութիւնը՝ ՀԱԱ, ՊՖոնդ 409, ցուցակ 1, գործ 4708, վաւերագիր թիւ 20:
- <sup>36</sup> ՀԱԱ, ՊՖոնդ 409, ցուցակ 1, գործ 4670:
- <sup>37</sup> Նոյն գործում պահպանում է այս նամակի երկրորդ օրինակը. թերեւս Դիանա Արզարն անհանգստացել է, որ մի նամակը կարող է տեղ չհասնել եւ ուղարկել է երկրորդը:
- <sup>38</sup> ՀԱԱ, ՊՖոնդ 409, ցուցակ 1, գործ 4669:
- <sup>39</sup> Սոյն նամակից նոյնպէս գրուել է երկու օրինակ: Ուղարկուել է, ինչպէս ծրարի վրայ է նշուած, "via Siberia, Registered, Etch Miatzin, Armenia, SSSR": Գործին կցուած են նաեւ երկուական օրինակ անուամաթերթիկներ՝ Ճապոնիա հասած հայերի տուեալներով, հայերէն եւ անգլերէն: Նրանք են՝ Աննա Տէր-Ղազարը (ծն. 1862, Երեւան),

Անբառամ Մարգարեանը (ծն. 1870, Երեւան), Նունօ Դալիթեանցը (ծն. 1882, Էջմիածին), Սամուէլ Փալաստանեանը (ծն. 1883, Երեւան), Սամուէլ Գալստեանը (ծն. 1883, Երեւան), Վարդանոյշ Թորոսեանը (ծն. 1890, Էջմիածին), Փայլածու Սիլիկեանը (ծն. 1905, Երեւան), Ազիզօզ Լայրապետեանը (ծն. 1907, Էջմիածին), Հմայեակ Լայրապետեանը (ծն. 1912, Էջմիածին), Արիստակէս, Արփենիկ եւ Կարապետ Լայրապետեանները (ծն. 1911, 1912, 1913): Ինչպէս տեսնում ենք, բոլորի ծննդավայր նշուած է Երեւանը կամ Էջմիածինը: Ամենայն հաւանականութեամբ, այդպէս արուել է՝ որպէս Լայաստանի ամենից յայտնի բնակավայրեր: Այս ցանկում նշուած է նաեւ Դիանա Արգարի փեսան՝ Սամուէլ Գալստեանը, որն իրականում եղել է նորջողայեցի, սակայն նրան նոյնպէս պէտք է եղել վկայական Լայաստանում ծնուած լինելու վերաբերեալ, որի շնորհիւ էլ նա 1929ին կարողացել է տեղափոխուել ԱՄՆ:

<sup>40</sup> ՀԱԱ, ՊՖոնդ 409, ցուցակ 1, գործ 4667, վաւերագիր 2:

<sup>41</sup> Նկատի ունի Վեհափառի իրեն ուղարկած կոնդակը:

<sup>42</sup> ՀԱԱ, ՊՖոնդ 409, ցուցակ 1, գործ 4672, վաւերագիր 1:

<sup>43</sup> ՀԱԱ, ՊՖոնդ 409, ցուցակ 1, գործ 4672, վաւերագիր 2:

<sup>44</sup> ՀԱԱ, ՊՖոնդ 409, ցուցակ 1, գործ 4672, վաւերագիր 3:

<sup>45</sup> ՀԱԱ, ՊՖոնդ 409, ցուցակ 1, գործ 4672, վաւերագիր 4-5:

DIANA APCAR'S LETTERS TO THE SUPREME COUNCIL OF ST. ECHMIADZIN  
(summary)

ARTSVI BAKHCHINIAN

Diana Apcar (1854-1937) was one of the outstanding figures of the early twentieth century Armenians of the Far East.

Apcar was born in Rangun, Myanmar, then relocated with her family to Calcutta, where she married Michael Apcar in 1890; they settled in Japan. Apcar was an outspoken figure in the Armenian community of the Far East. She wrote a number of articles, published books and essays on the Armenian question, and campaigned for Armenians' rights under Ottoman oppression.

In 1920 Apcar was appointed diplomatic representative of the Republic of Armenia and maintained good relations with St. Echmiadzin.

Apcar was supportive and helpful to Armenian migrants. During and after the Armenian Genocide, in the late 1910s, a number of refugees had reached Vladivostok and wanted to cross to the USA. They referred to her for help. The local Japanese authorities sought her advice in such cases too. Apcar helped these refugees and intervened with the local Japanese authorities to grant them exit permits.

The author, Artsvi Bakhchinian, presents 8 letters/notes Diana Apcar sent to St. Echmiadzin between March 25, 1926 and May 14, 1935. These letters have to do with requests regarding church calendars and birth certificates, which were necessary for the granting of exit visas to the refugee Armenians.